# «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-247 օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագրում «Պետական» բառը փոխարինել «Համայնքային» բառով, 1-ին հոդվածից հանել «պետական կառավարչական հիմնարկների (այսուհետ՝ հիմնարկ) և» բառերը, իսկ «համայնքային կառավարչական հիմնարկների» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ հիմնարկ)» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով:»:

2) 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «համայնքի» բառով:

3) 3-րդ մասից հանել «, որը ներառում է համապատասխան պետական մարմնի անվանումը, իսկ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքում՝ նաև «աշխատակազմ» բառը» բառերը:

4) 5-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և հիմնարկի» բառերը:

5) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «վարչական» բառը փոխարինել «իրավական» բառով, իսկ 3-րդ պարբերությունից հանել «պետական» բառը:

**Հոդված 4.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հանել «պետական կամ» բառերը, իսկ 3-րդ մասից հանել «, բացառությամբ դիվանագիտական և հյուպատոսական մարմինների» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է համայնքը:»:

**Հոդված 6.** Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հիմնարկի հիմնադիրը համայնքն է, համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի հիմնարկինը՝ համայնքի ավագանին:»:

2) 2-րդ մասի 2-րդ նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

3) 3-րդ մասում «կառավարության սահմանած» բառերը փոխարինել «օրենքով սահմանված» բառերով:

4) 4-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հիմնարկի կանոնադրությունը հաստատում է հիմնադիրը:»:

**Հոդված 7.** Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հիմնարկի կառուցվածքը հաստատում է նրա հիմնադիրը:»,

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Հիմնարկի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է հիմնարկի առանձին գործառույթները կամ դրանց մի մասը և հանդես է գալիս համայնքի անունից: Միայն օրենսդրությամբ կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:»,

3) 5-րդ մասի 1-ին նախադասությունից հանել «Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հիմնարկի» բառերը,

4) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 8.** Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հիմնարկի կառավարումն իրականացնում է հիմնադիրը:

Համայնքային կառավարչական հիմնարկի ղեկավարումն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:»,

2) 2-րդ և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 9.** Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի դ) և ե) կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«դ) սահմանում է հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունները.

ե) նշանակում և ազատում է հիմնարկի աշխատակազմի քարտուղարին, իսկ համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի քարտուղարին նշանակում է համայնքի ղեկավարը.»,

2) 1-ին մասի ը) կետում «ղեկավարի» բառը փոխարինել «քարտուղարի» բառով, իսկ ժ) կետում «պետական» բառից հետո լրացնել «կամ համայնքային» բառերը,

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 10.** Օրենքի 12-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 11.** Օրենքի 13-րդ հոդվածի՝

1) վերնագրում և հոդվածի մասերում «համայնքի աշխատակազմի ղեկավարը» բառերը համապատասխան հոլովածևերով փոխարինել «համայնքի աշխատակազմի քարտուղարը» բառերով՝ համապատասխան հոլովածևերով, իսկ «պետական մարմնի» բառը փոխարինել «համայնքի» բառով:

2) 1-ին մասի 2-րդ պարբերությունում «հիմնադիրը» բառը փոխարինել «համայնքի ղեկավարը» բառերով:

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

4) 3-րդ մասի 2-րդ պարբերությունում «պետությանը» բառից առաջ լրացնել «համայնքին կամ» բառերը:

5) 5-րդ մասը շարադրել  նորխմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Հիմնարկի աշխատակազմի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալներից մեկը՝ համայնքի ղեկավարի որոշմամբ:»:

**Հոդված 12.** Օրենքի 14-րդ հոդվածի՝

1)  վերնագրում «ղեկավարի» բառը փոխարինել «քարտուղարի» բառով,

2) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 13.** Օրենքի 15-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16. Հիմնարկի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, հիմնադրի լիազորած և օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

**Հոդված 14.** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 15.** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ:

«1. Հիմնարկի գործունեությունը դադարում է հիմնադրի որոշմամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հիմնարկի գործունեությունը դադարեցված է համարվում դրա վերաբերյալ հիմնադրի, որոշումն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո, եթե այդ որոշմամբ ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

Հիմնարկի գործունեությունը կարող է դադարեցվել, եթե օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր: Գործունեությունը դադարեցրած համայնքային կառավարչական հիմնարկի քաղաքացիական իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերակազմակերպված համայնքին:»:

**Հոդված 16.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: